7946

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«10» 05 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0050-22

Ձեռնարկողը՝ ***«Արզնի առողջարան» ՓԲԸ***
Կոտայքի մարզ, գ. Արզնի առողջարանային փ. 4-րդ. փակ

Գործունեությունը՝ Արզնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/62 և 6/64 հորատանցքերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0050-22

<10> 05 2022թ.

Կոտայքի մարզի Արզնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/62 և 6/64 հորատանցքերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Արզնի առողջարան» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Արզնի համայնք

Ներածական մաս. Արզնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանի Արզնիի առողջարանի տարածքում, Հրազդան գետի գեղատեսիլ կիրճում, գետի ձախ ափին:

«Արզնի առողջարան» հանգստավայրը բուժման և հանգստի կազմակերպման համար անհրաժեշտ պայմաններով հագեցած մի ամբողջական համալիր է: Այն գտնվում է ծովի մակերևույթից 1250մ բարձրության վրա, Երևանից 23կմ դեպի հյուսիս, անտառով ու թփուտներով պատված ձորալանջին:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցոության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2-րդ կետի գ. ենթակետի՝ դասակարգվում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հանքային ջրի և ազատ ածխաթթու գազի պաշարները առաջին անգամ 01.07.1966թ. դրությամբ հաստատվել են նախկին ԽՍՀՄ Պաշարների Պետական Հանձնաժողովի (ՊՊՀ) կողմից (արձանագրություն թիվ 5164, 27.05.1967թ.) և 01.01.2002թ. դրությամբ վերահաստատվել են ՀՀ օգտակար հանածոների պաշարների գործակալության (ՕՀՊԳ) կողմից (արձանագրություն թիվ 12, 30.06.2003թ.):

Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրում բացակայում են սողանքային երևույթները, մոտակայքում կան անտառային ծածկույթներ, առողջարանային և տնտեսական շինություններ:

Թիվ 1/62 հորատանցքը գտնվում է Հրազդան գետի կիրճի ձախ ափին, Արզնիի առողջարանի լոգարանի շենքից դեպի հյուսիս-արևելք 39.5մ հեռավորության վրա, իսկ թիվ

6/64 հորատանցքը գտնվում է Արզնիի առողջարանի տարածքում, թիվ 1/62 հորատանցքից 24.0մ դեպի հյուսիս:

Հորատանցքերի կոորդինատներն են՝

Հորատանցքի համարը	I. CK-42 կոորդինատների համակարգով		II. ARM WGS-84 կոորդինատների համակարգով		Հորատանցքի բացարձակ բարձրությունը, մ
1/62	X=446426	Y= 8465255	X = 464229	Y =8465153	1280.2
6/64	X= 4464260	Y= 8465250	X =4464253	Y = 465148	1280.0

Թիվ 1/62 հորատանցքի ջրի ծախսը կազմում է 5.0լ/վրկ, հանքայնացումը՝ 13.6-14.5գ/լ, ջերմաստիճանը՝ 20.0-21.0^{0}C: Լուծված CO_2 գազի պարունակությունը կազմում է 1.6-2.0գ/լ, իսկ ազատ CO_2 գազինը՝ 5.0-5.2գ/լ: Ըստ քիմիական կազմի՝ քլորիդ-հիդրոկարբոնատային, նատրիումային է: Հորատանցքի հանքային ջրի հիմնական արդյունաբերական միջակայքը, որը համապատասխանում է կոնդիցիայի պայմաններին, տեղակայված է 48.0-80.0մ խորության վրա:

Թիվ 6/64 հորատանցքի ջրի ծախսը կազմում է 7.02լ/վրկ, հանքայնացումը՝ 5.4-6.5գ/լ, ջերմաստիճանը՝ 16.4^{0}C: Լուծված CO_2 գազի պարունակությունը կազմում է 1.6-1.8գ/լ, իսկ ազատ CO_2 գազինը՝ 0.2-0.4գ/լ: Ըստ քիմիական կազմի՝ քլորիդ-հիդրոկարբոնատային, նատրիումային է: Հորատանցքի հանքային ջրի հիմնական արդյունաբերական միջակայքը, որն համապատասխանում է կոնդիցիայի պայմաններին, տեղակայված է 50.0-67.0մ խորության վրա:

«Արզնի առողջարան» ՓԲԸ ցանկանում է ստանալ Կոտայքի մարզի Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/62 և 6/64 հորատանցքերի, որոնցով հաշվարկվել և հաստատվել են հանքային ջրի պաշարները, արդյունահանման իրավունք՝ հանքային ջրի օգտագործում բուժական նպատակով և ըմպելասրահում խմելու համար, 20 տարի ժամկետով:

«Արզնի առողջարան» ՓԲ ընկերության պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է՝ 30000.0մ^3/տարի կամ 0.95 լ/վրկ (10000.0մ^3/տարի կամ 0.32լ/վրկ թիվ 1/62 հորատանցքից՝ բուժական նպատակով և 20000.0մ^3/տարի կամ 0.63լ/վրկ թիվ 6/64 հորատանցքից՝ ըմպելասրահի համար):

Բոլոր ջրհավաք հորատանցքերում առաջին ջրատար գոտու ջրերը մեկուսացվել են ամրակապող չժանգոտվող (խմելու որակի) խողովակներով և կատարվել է արտախողովակային տարածքի ցեմենտացիա:

Շահագործման ժամանակ չի թույլատրվում շահագործվող ջրհավաք (կապտաժային) հորատանցքից ՊՏՀ-ի կողմից հաստատված պաշարի չափից ավելի արդյունահանումը:

Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի շահագործումը պետք է իրականացվի կոնկրետ հանքավայրի հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրի հաստատված պաշարի քանակին, նրա քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին խիստ համապատասխան:

Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունաբերական շահագործման ժամանակ անհրաժեշտ է՝

- Ապահովել սիստեմատիկ մշտադիտարկումներ շահագործողական հորատանցքերի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ:
- Ջրհավաք (կապտաժային) հորատանցքերը կահավորել վերերկրյա կառույցով: Իրականացնել հորատանցքերի բերանի շուրջը ֆունդամենտի հուսալի հիդրոիզոլյացիա, որը կբացառի մակերևութային աղտոտված ջրերի մուտքը դեպի հորատանցքեր:
- Ջրհավաք հորատանցքերի շուրջ կառուցել առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտի, հորատանցքի ելքը հնարավոր աղտոտումից պահպանելու համար:
- Ջրհավաք հորատանցքերից ջրառն իրականացնել բնական ինքնահոսի պայմաններում՝ հանքավայրի հիդրոդինամիկ և հիդրոքիմիական պայմանները խախտելուց խուսափելու համար:

Հանքային ջրերի պաշարները վերականգնման առանձնահատկություն ունեն և շահագործման ընթացքում պահանջում են զուգահեռաբար իրականացնել ջրերի որակի, քանակի, վիճակի և շահագործման ռեժիմի նկատմամբ ուսումնասիրություններ, որը կապահովի զերծ պահել ջրերը աղտոտումից, սպառումից և տեխնածին գործընթացների վնասակար ազդեցությունից:

Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ նախատեսվող և իրականացվող ռեժիմային դիտարկումների նպատակն է՝
- հանքավայրի շահագործման ժամանակ հանքային ջրի քանակի և որակի կայունության պահպանումը.
- հնարավոր սպառման և աղտոտման բացահայտումն ու նախազգուշացումը.
- ստորերկրյա հանքային ջրերի բնական ու խախտված ռեժիմների և դրանց ձևավորման օրինաչափությունների ուսումնասիրությունը.
- ստորերկրյա հանքային ջրերի ռեժիմի կարճաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսումների համար տվյալների հավաքագրումը և վերլուծությունը.
- ստորերկրյա հանքային ջրերի աղտոտման և սպառման աստիճանի գնահատման մասին հենակետային տվյալների ստացումը.
- ստորերկրյա հանքային ջրերի շահագործվող հանքավայրերում ջրի ծախսի, ճնշման կամ մակարդակի և ջերմաստիճանի չափումների, ինչպես նաև ֆիզիկաքիմիական անալիզների իրականացումը, ստորերկրյա ջրերի պաշարների վերագնահատման օպերատիվ տվյալների հավաքագրումը, մշակումը և ամփոփումը.

Ելնելով վերոհիշյալից, հանքավայրի թիվ 1/62 և 6/64 հորատանցքերում և առողջարանի տարածքում համաձայն ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. N 1484-Ն և 22 փետրվարի 2018թ. N191-Ն որոշումների հավելվածի, սահմանված կարգով, կիրականացվեն մշտադիտարկումներ (մոնիտորինգ)՝ ջրի և գազի ծախսի, ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումներ, ինչպես նաև կկատարվեն մթնոլորտային օդի և հողային ծածկույթի նմուշարկումներ՝ համապատասխան լաբորատոր հետազոտություններ իրականացնելու համար

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու սահմանը պաշտպանված ստորերկրյա ջրերի օգտագործման դեպքում ըստ գործող հրահանգի սահմանվում է ջրհավաք հորատանցքից ոչ պակաս 30.0մ հեռավորության վրա:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտին ընդգրկում է բոլոր այն հորատանցքերը, որոնցով հաշվարկվել և հաստատվել են հանքավայրի շահագործողական

պաշարները: Սանիտարական պահպանության գոտու տարածքը անմիջապես հորատանցքերի մոտ պլանավորված է այնպես, որպեսզի հնարավոր լինի մակերևութային աղտոտված ջրերը հեռացնել հորատանցքերի սահմաններից դուրս: Գոտին պարսպատված է մետաղական ցանկապատով և ապահովված է պահպանությունով:

Ջրհավաք հորատանցքերը կահավորված են վերերկրյա կառույցով: Իրականացվել է հորատանցքերի բերանի շուրջ ֆունդամենտի հուսալի հիդրոիզոլյացիա, որը բացառում է մակերևութային աղտոտված ջրերի մուտքը դեպի հորատանցք:

Հանքավայրի սանիտարական պահպանության գոտու սահմաններում պետք է պահպանվի ռեժիմ, որը կապահովի բարձր սանիտարա-հիգիենիկ պայմաններ և կպաշտպանի հանքային ջրերի հանքավայրը աղտոտումից և սպառումից:

Հատուկ ուշադրություն պետք է դարձվի հանքային ջրի ջրհավաք հորատանցքի պահպանմանը:

Գոտու տարածքում թույլատրվում է լեռնային և հողային աշխատանքների կատարումը, կառույցների շինարարությունը (կապտաժների, պոմպային կայանների, ջրագծերի, պահակակետի, ջրի տարաների), հորատանցքի գլխամասի կահավորման, ափ ամրացնող, հակասողանքային և հակաէրոզիոն աշխատանքների կատարումը, որոնք նպաստում են ստորերկրյա ջրերի հանքավայրն ու ջրատար հորիզոններն աղտոտումից զերծ պահելու և պահպանությունն ապահովելու:

«Արզնի առողջարան» ՓԲ ընկերության կողմից ՀՀ Կոտայքի մարզի Արզնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/62 և 6/64 հորատանցքերից հանքային ջրի արդյունահանման ժամանակ ընդերքօգտագործման թափոններ (մակաբացման ապարներ և այլ թափոններ) չեն առաջանում

«Արզնի առողջարան» ՓԲ ընկերությունը մարդկանց համալիր բուժման գործընթացը իրականացրել է և կշարունակի իրականացնել ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող տարածքում կառուցված առողջարանային համալիրի 1-ին և 2-րդ մասնաշենքերում, որոնց մակերեսները համապատասխանաբար կազմում են՝ 3875.3մ² և 3496.8մ²: Այն գտնվում է թիվ 1/62 և 6/64 հորատանցքերից մոտ 640.0 մ հեռավորության վրա

Ընկերության կողմից Կառուցվել է «Արզնի առողջարան» հանգստավայրի 2-րդ մասնաշենքը: Այն ունի աշխատասենյակներ, ննջասենյակներ, փակ լողավազան, սպորտդահլիճ, կինոդահլիճ, խաղասրահ՝ բիլիարդ, թենիս, շախմատ, մանկական խաղասրահ: Մասնաշենքը ապահաված է ժամանակակից սարքավորումներով, տեխնիկայով, կահույքով:

2013-2014թթ. հիմնովին վերանորոգվել է հանգստավայրի բուժման 1-ին մասնաշենքը, կաթսայատունը, կառուցվել է հանքային ջրի ըմպելասրահը, բաց լողավազանը, կեղտաջրերի մաքրման կայանը, արևային էներգիայի կայան 100.0 կՎտ հզորությամբ:

Ընկերությունը բուժման և հանգստի գործընթացը կազմակերպելու համար ունի լուսավոր, հարմարավետ, միջազգային պահանջներին համապատասխան երկու մասնաշենք՝ կահավորված ժամանակակից բուժական սարքավորումներով, ննջասենյակներ, աշխատողների ու հանգստացողների սննդի և հանգստի կազմակերպման կառույցներ (փակ լողավազան, մանկական խաղասրահ, բիլիարդ, սեղանի թենիս, շախմատ և այլ):

Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ շահագործման, բուժման և հանգստի գործընթացը կազմակերպման համար ընկերությունը համալրված է բազմատիրոջ

մասնագետներով՝ բժիշկներ, բուժկույրեր (30 աշխատող), ինչպես նաև ադմինիստրատիվ և սպասարկող անձնակազմով (10 + 50 աշխատող):

Ներկայումս «Արզնի առողջարան» համալիր բուժման և հանգստի նպատակով տարեկան միջինը այցելում են մոտ 14000 մարդ ամենատարբեր երկրներից (ԱՊՀ-ից, ԱՄՆ-ից,, Ռուսաստանից, Կանադայից, Սինգապուրից, Եվրոպական և այլ երկրներից): Համալիրում օրական բուժում է ստանում միջինը մոտ 200 մարդ և ողջ տարի:

«Արզնի առողջարան» համալիրում բուժում են աղե-ստամոքսային տրակտի քրոնիկական հիվանդություններ, հենաշարժիչ ապարատի հիվանդություններ, նյութափոխանակության խանգարումներ, կանանց սեռական օրգանների քրոնիկական բորբոքային հիվանդություններ, նևրոզներ, գերհոգնածություն և այլ հիվանդություններ: Վերականգնում են ինֆարկտ, կաթված, սրտի/սրտանոթների վիրահատություն տարած հիվանդների:

Առողջարանում գործում են՝ հանքային ջրով լոգանքներ (6 հատ վաննա 250.0 լիտր տարողությամբ), ջրաբուժություն, բուժական ֆիզկուլտուրա և մերսում, ֆիզիոթերապիա, ինհալացիա և թթվածնային կոկտեյլ, բուժում պարաֆինով, տորֆով և կավով (2 հատ վաննա 350.0 լիտր տարողությամբ), տզրուկներով, ասեղներով և NUGA BEST սարքով:

«Արզնի առողջարան» ՓԲԸ համար հանքային ջուրը հանքավայրի թիվ 1/62 հորատանցքից գետնի տակով 2 դյույմանոց տրամագծի պլաստմասյա (խմելու որակի) խողովակի միջոցով տեխափոխվում է առողջարանային համալիրի 1-ին մասնաշենք, որտեղ ընկերությունը կազմակերպում և իրականացնում է այցելուների բուժման և հանգստի գործընթացը:

Ընկերությունն օգտվել և շարունակելու է օգտվել գոյություն ունեցող ավտոճանապարհից և ենթակառուցվածքներից՝ գազատար, ջրատար, էլեկտրահաղորդման գծեր և կոյուղագծեր, այլ օժանդակ շինություններ չեն նախատեսվում:

Հանքային ջրի ջրհավաք հորատանցքերի շահագործման աշխատանքների անվտանգության ապահովման նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկայի հրահանգի բոլոր պահանջները:

Հաշվի առնելով աշխատանքների բնույթը Արզնիի ածխաթթվային հանքային ջրի արդյունահանման աշխատանքների ընթացքում որևիցե տեխնածին ճնշումներ հանքավայրի շրջակայքի մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա չեն դրսևորվելու, քանի որ, հանքային ջրի արդյունահանման ընթացքում փոշու և վնասակար նյութերի արտանետումներ չի կատարվելու, իսկ կենցաղային աղբը կտեղափոխվի մոտակա աղբավայրի կետեր:

Հանքավայրի տարածքում բնության, պատմության և մշակույթի հուշարձաններ հաշվառված չեն:

Հանքավայրի տարածքում չեն արձանագրվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելա- և ապրելավայրեր:

Աշխատանքների կատարման ընթացքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, հաշվի առնելով աշխատանքների բնույթը, կլինի աննշան:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան տրամադրել 100,0 հազար դրամ: տնտեսական վնասը կկազմի 274400.0 դրամ

Պատճառաբանական մաս. Կոտայքի մարզի Արզնի համայնքապետարանում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակությունը հավանություն են տվել

նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, նախարարությունները կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Կոտայքի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

-Հանքավայրի ջրհավաք թիվ 1/62 և 6/64 հորատանցքերի շահագործումը իրականացնել համաձայն ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1267-Ն որոշմանը:
- Անհրաժեշտ է համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան բարեկարգման աշխատանքներ իրականացնել համայնքում:
-Անհրաժեշտ է իրականացնել հիդրոերկրաբանական ռեժիմային ստացիոնար դիտարկումներ (մոնիտորինգ) հորատանցքերի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ, ինչպես նաև կատարել ջրի և հողային ծածկույթի նմուշարկումներ՝ համապատասխան լաբորատոր հետազոտություններ իրականացնելու համար:
-Անհրաժեշտ է ջրհավաք հորատանցքերից ջրառն իրականացնել բնական ինքնահոսի պայմաններում՝ հանքավայրի հիդրոդինամիկ և հիդրոքիմիական պայմանները խախտելուց խուսափելու համար:
-Առաջին սանիտարական պահպանության գոտու տարածքում արգելվում են բոլոր տեսակի շինարարական աշխատանքներ, որոնք չունեն անմիջական կապ հորատանցքի շահագործման, վերակառուցման/վերանորոգման և սպասարկման հետ, այդ թվում օբյեկտների կառուցումը, մշտական կամ ժամանակավոր մարդկանց բնակվելը, թունաքիմիկատների և պարարտանյութերի տեղակայումը և օգտագործումը, ցանկացած կեղտաջրերի թափումը: Բացառել կողմնակի անձանց մուտքը առաջին սանիտարական պահպանության գոտի:
-Հանքավայրի սանիտարական պահպանության գոտու սահմաններում պետք է պահպանվի ռեժիմ, որը կապահովի բարձր սանիտարա-հիգիենիկ պայմաններ և կպաշտպանի հանքային ջրերի հանքավայրը աղտոտումից և սպառումից:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Արզնի առողջարան» ՓԲ ընկերության կողմից ներկայացված Կոտայքի մարզի Արզնի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/62 և 6/64 հորատանցքերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հ. Մեսրոպյան